

ԱՇԽԱՐՀԱՇՐՋԻԿԻ ՄԸ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ԲԱՆԱԽՕՍԽԻԹԻՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱՇՐՋԻԿԻ ՄԸ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ԲԱՆԱԽՕՍԽԻԹԻՆԸ

Ալբերտ, Նոյեմբեր 15, ժամը 20:00, Լիոնի Սուրբ Յակոբ Մայր եկեղեցու կից «Կարպիս Մանուկեան» սրահին մէջ շատ հետաքրքրական բանախօսութիւն եւ հանդիպում մը տեղի ունեցաւ սահմիկներով (diaporatives): Մեր հիւրն էր լուսանկարիչ Անդրանիկ Զեքեան:

Երեկոյթը կազմակերպուած էր Լիոնահայ Տիկնանց Միութեան կողմէ եւ կը կրէր «Անձ մը, երկու անիւ եւ 912 օրեր, աշխարհաշրջիկի մը շարժանիւով (motocyclette) արկածախնդրութիւնները» խորագիրը:

Անդրանիկ ճամբար ելած է 2010 Սեպտեմբերին շարժանիւով, իր մանկութեան ընկերոջ հետ:

Սկիզբը ունեցած է առողջական

հանգներ...):

Շարժանիւր (BMW Trail մը) զոր «Լիզզի» կոշած էր, հաւատարիմ ընկերը եղած է: «Էութեանս մէջ թափառաշրջիկ էի, վայրկեան մը իսկ շմտածեցի վերջ տալ այս արկածախնդրութեան: Իրաքանչիւր հանգրուանի կը յայտնաբերէի նոր երկիր ու նոր մշակոյթ» ըստ Անդրանիկ Զեքեան:

Իր շատ հաւանած ու զգացուած երկիրները եղած են Պարսկաստանու Պիրմանիան: «Հակառակ իրենց գէշ համբաւին, ժողովուրդը ունէր ոսկէ սիրտ մը, եւ դիմաւրուեցայ շերմ ընդունելութեամբ, զոր կարելի չէ նկարագրել» ըստ ու աւելցուց. «Աշխարհը նոյնը չէ ինչ որ հեռաւտեսիլէն մեզ կը ներկայացնեն: Երկու ու կէս տարուան ընթացքին ճամբուն վրայ ոչ մէկ նեղութիւն ունեցայ: Այս պատճառաւ է, որ կ'ուզեմ ծեզի հետ բաժնել իմ փորձառութիւնս, պատմել ինչ որ տեսայ ու ապրեցայ»:

Մի անգամ այն, սրահին մէջ տեղի կ'ունենար եռօրեայ ցուցահանդէս մը, ուր կը ներկայացնէին իր լուսանկարներէն գլխաւորները:

Ես իմ կարգիս անձամբ ապրեցայ անմոռանալի երեկոյթ մը, Լիոնի միօրեայ Հայկագեան վարժարանի իմ շատ սիրելի երեխնի աշակերտներէս Անդրանիկին հետ:

Տարիները շուտով սահած էին ու մեր սիրելի Անդօն դարձած երիտասարդ աշխարհաշրջիկ մը:

Նորանոր նուաճումներ իրեն:

ԱՐՈՒՍԵԱԿ ՏէՎԱՔԹԵԱՆ ■



հարցեր, ստիպուած վերադարձած է Ֆրանսա, դարմանուելու: Երբ ընկերու որոշած է այլեւս չուղեցիկի իրեն՝ Անդրանիկ վերստին ճամբար ելած է, այս անգամ առանձին:

Վերադարձած է երկու ու կէս տարի յետոյ, այցելելէ ետք 40 երկիր, իր շարժանիւր համարացոյցին վրայ՝ 92.000 քիլոմետրով (Պալքաններ, Նէփալ, Ինտոնեզիա, Անդարքթիքա, Չիլի, Միացեալ նա-

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



ԿՐԻՓԱՄԱՐՏ

Հայաստանէն 16ամեայ Դւկթ Ասատրեան, նոյեմբեր 16ի Ռուսաստանի Անափա քաղաքի մէջ տեղի ունեցած պատանիներու եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն, նուաճեց 48 քկ. դասակարգի տիտղոսը: Անցեալ տարի, նոյն մրցաշարքին, ան գուրս մնացած էր 1/16րդ աւարտականներուն: Իր հայրենակիցը՝ Վարդան Քոսեան, 70 քկ. դասակարգի կէս աւարտականին պարտուեցաւ եւ գրաւեց 3րդ տեղը: Ընդհանուր առմամբ, հայազգի 11 մարզիկներ կը մասնակցէին այս մրցաշարքին, որ սկսած էր նոյեմբեր 10ին: Հայաստանէն Սպարտակ Թամարեան (54 քկ.) եւ եռորդ Տարափեան (63 քկ.) քառորդ աւարտականներուն գուրս մնացին, երկուքն ալ պարտուելով բրիտանացի մրցակիցներէ, որոնք դարձան իրենց դասակարգերու ախոյեանները: 52 քկ. դասակարգին մէջ, Հրայր Շախվերդեան իր մարտը կորսնցուց 1/8րդ աւարտականին եւ գուրս մնաց, մինչ 2012ին հասած էր մինչեւ կէս-աւարտական: Նոյն մրցաշարքի նախորդ շորս տարիներուն, հայազգի մարզիկները 14 անգամ հասած են մինչեւ կէս-աւարտական ու աւարտական, բայց միայն մէկ տիտղոս նուաճած են:



ՄԱՐՄԱՐԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ

Թրամփոլինի համաշխարհային ախոյեանութեան մրցումներուն, որոնք տեղի ունեցան նոյեմբեր 7էն 10, Սոֆիայի մէջ, Ռուսաստանէն Սերկէյ Ազարեան անհատական խաղերուն շահեցաւ պրոնգեայ մետալ, մնալով եր-

Հոր Հայու
26/11/2013